

Մրցույթի հիմնական պայմանները

1. Ընդհանուր դրույթներ

Սույնով (այսուհետ՝ «Առաջարկ») սահմանվում են մրցույթի (այսուհետ՝ «Մրցույթ») պայմաններն ու կանոնները: Մասնակցելով Մրցույթին՝ Դուք հայտարարում եք, որ լիովին և անվերապահ ընդունում եք Առաջարկի այս պայմանները:

Սույն Առաջարկը համարվում է մարքեթինգային միջոցառում:

2. Կազմակերպիչ

2.1. Մրցույթն իրականացվում է «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) կողմից (հասցե՝ ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1):

2.2. Մրցույթն անցկացվում է Հայաստանի Հանրապետության տարածքում:

3. Մրցույթի ժամկետ

3.1. Մրցույթի հայտարարությունը տեղադրված է Բանկի կայքում՝ www.conversebank.am:

3.2. Մրցույթն անցկացվում է 2022 թվականի սեպտեմբերի 05-ից՝ ժամը 00:01-ից մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը՝ ժամը 23:59: Մրցույթի պայմանները նկարագրված են Առաջարկի 5-րդ բաժնում:

3.3. Մրցույթի արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի ֆեյսբուքյան էջի (www.facebook.com/conversebank) ուղիղ հեռարձակման միջոցով մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ:

3.4. Մրցույթի ամփոփումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում կապի հաստատման անհնարինության դեպքում (Հաճախորդի չպատասխանելու, անհասանելի լինելու, Բանկին սխալ/թերի տվյալներ հաղորդած լինելու կամ այլ) Մրցույթի արդյունքները տվյալ Հաճախորդի համար համարվում են ուժը կորցրած:

3.5. Սահմանել, որ հաղթող մասնակիցն իրավունք ունի գլխավոր մրցանակը փոխանցել իր ընկերոջը, որն ունի Converse Mobile հավելված: Վերոնշյալ ձևակերպումը կկատարվի Converse Mobile հավելվածի չատ օգնականի միջոցով, որտեղ մասնակիցը պետք է տրամադրի ընկերոջ տվյալները (անուն, ազգանուն, հայրանուն, անձը հաստատող փաստաթղթի տվյալներ)՝ նույնականացման համար: Մրցանակի փոխանցման առավելագույն ժամկետն է 2022 թվականի դեկտեմբերի 23-ը՝ ժամը 18:00: Այլապես նման հնարավորության տրամադրումը կճանաչվի ուժը կորցրած:

3.6. Մրցանակների սերտիֆիկատները վավեր են Մրցույթի ամփոփումից սկսած 5 (հինգ) աշխատանքային օր ժամկետում:

3.7. Սույն Առաջարկում նշված ժամկետները հաշվարկված են Երևանի ժամանակով:

4. Մրցույթի մասնակիցներ

4.1. Ֆիզիկական անձ, ՀՀ ռեզիդենտ հաճախորդները (այսուհետ՝ Հաճախորդ), ովքեր կներբեռնեն կամ կունենան արդեն գործող Converse Mobile հավելվածը և իրենց տրամադրված Visa Virtual քարտ/եր-ով կկատարեն հանրագումարային 15,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ գործարք Մրցույթի անցկացման ժամանակահատվածի ընթացքում:

4.2. Մրցույթին կարող են մասնակցել 18 տարին լրացած ֆիզիկական անձինք՝ բացառությամբ Կազմակերպչի աշխատակիցների:

5. Մրցույթին մասնակցելու կանոններ

5.1. Մրցույթի մասնակից դառնալու համար հարկավոր է Կոնվերս Բանկի Visa Virtual վճարային քարտի առկայություն:

5.2. Visa Virtual քարտ/եր-ով հարկավոր է կատարել հանրագումարային 15,000 ՀՀ դրամ և ավելի անկանխիկ գործարք Մրցույթի անցկացման ժամանակահատվածի ընթացքում:

5.3 Առաջարկի 5.2 կետում նշված կանոնները կատարելու դեպքում Հաճախորդն էլեկտրոնային հասցեին կստանա անհատական կոդ, որով կարող է մասնակցել Մրցույթին:

5.4. Հաճախորդը պետք է ներբեռնի և գրանցվի Converse Mobile հավելվածում:

5.5. Եթե Հաճախորդը գրանցված է Converse Mobile-ում, կատարում է գործարքներ Կոնվերս Բանկի Visa Virtual քարտով Մրցույթի անցկացման ժամանակահատվածում, և գործարքների ընդհանուր ծավալը կազմում է 15,000 ՀՀ դրամ, ապա Հաճախորդը համարվում է Մրցույթի մասնակից:

5.6. Կատարած յուրաքանչյուր 15,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի գործարքի դիմաց մասնակիցը ստանում է մեկ անհատական կոդ:

5.7. Յուրաքանչյուր հաջորդ 15,000 ՀՀ դրամ ընդհանուր գումարի գործարքի դեպքում մասնակցի հաղթելու հավանականությունն ավելանում է: Ընդ որում՝ յուրաքանչյուր մասնակցի տրամադրված բոլոր եզակի անհատական կողերը մասնակցում են վիճակահանությանը միմյանցից անկախ:

5.8. Քարտից քարտ փոխանցումները, քարտից այլ հաշիվ փոխանցումները, կոմունալ վճարումները (ներառյալ՝ հեռահաղորդակցման, հեռուստատեսության, ինտերնետ ծառայությունների վճարները), հաշիվների, քարտերի, էլեկտրոնային դրամապանակների համալրումները, վարկի մարումները, խաղատների և շահումով խաղերի խաղադրույքների, վիրտուալ խաղատների և խաղադրույք ընդունող ընկերությունների հաշիվների համալրումները, պետական մարմինների ծառայությունների դիմաց վճարները, տուրքերը, տուժանքները, օրենքով պարտադրված հարկերի վճարները, մուծումները, այլ վճարները և Բանկի ներքին համակարգերով իրականացված գործառնությունները չեն մասնակցում անկանխիկ գործարքների հաշվարկին:

5.9. Մրցույթի պայմանները չեն տարածվում հավելյալ և կից քարտերի վրա, և վերոնշյալ քարտերով գործարքները հաշվարկին չեն մասնակցում:

5.10. Անկանխիկ գործարքների ծավալի հաշվարկը կատարվում է հետևյալ սկզբունքով՝ ՀՀ դրամ արժույթով քարտերի դեպքում հաշվարկին կմասնակցի հաշվեգրված գումարի դրամային արտահայտությունը, իսկ արտարժույթային քարտերի դեպքում՝ քարտի արժույթով հաշվեգրված գումարը՝ փոխակերպված դրամի հաշվեգրման օրվա համար սահմանված ՀՀ ԿԲ փոխարժեքով:

5.11. Անկանխիկ գործարքների հաշվարկին չեն մասնակցում այն գործարքները, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ:

5.12. Բանկը հաղթող մասնակիցներին մրցանակի փոխարեն գումարային փոխհատուցում չի իրականացնում և մրցանակը չի փոխարինում այլ նվերով:

5.13. Բանկը պատասխանատվություն չի կրում POS տերմինալների և EPOS-տերմինալների խափանման (այդ թվում՝ կապի), անսարքության պատճառով չիրականացված կամ ոչ պատշաճ իրականացված անկանխիկ գործարքների համար:

5.14. Բանկն իրավունք ունի հրաժարվելու մրցանակներ տրամադրելուց, եթե Մրցույթի մասնակցի կողմից կատարվել է Մրցույթի պայմանների խախտում և/կամ զեղծարարություն և/կամ չարաշահում:

6. Հաղթողների սահմանում

6.1. Հաղթողների ընդհանուր թիվը՝ 15 հոգի:

6.2. Մրցանակների ցանկը.

№	Մրցանակների ցանկ	Քանակ
1	Ուղևորություն դեպի Ամստերդամ՝ (Don't Let Daddy Know) փառատոնին մասնակցելու համար (նախատեսված 2 անձի համար)	1 հատ
2	Samsung Galaxy S22 բջջային հեռախոս	3 հատ
3	JBL ականջակալ	3 հատ
4	Galaxy Buds Pro R190 ականջակալ	3 հատ
5	Amazon նվեր քարտ	5 հատ
	Ընդհանուր	15 հատ

6.3. Մրցույթում հաղթողները կընտրվեն պատահականության սկզբունքով՝ մասնակիցներին տրամադրված անհատական կոդերի միջոցով:

6.4. Անհատական կոդերը կուղարկվեն մասնակցին Մրցույթի ամփոփումից հետո՝ ոչ ուշ քան 2022 թվականի դեկտեմբերի 30-ը ներառյալ:

6.5. Մրցույթի արդյունքների ամփոփումը կիրականացվի Բանկի ֆեյսբուքյան էջի ուղիղ հեռարձակման միջոցով՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 10-ը ներառյալ: Մրցույթի ուղիղ հեռարձակման օրվա և ժամի մասին բոլոր մանրամասները Մրցույթի մասնակիցներին կձանուցվեն իրենց էլեկտրոնային հասցեի կամ SMS-ի միջոցով:

6.6. Մրցույթի մրցանակները ստանալու և ամփոփիչ միջոցառման անցկացման վայրի ու ժամանակի մասին Բանկը կտեղեկացնի մասնակցին էլեկտրոնային հասցեի և/կամ հեռախոսազանգի և/կամ SMS-ի միջոցով:

6.7. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակիցների անհատական կոդերը կիրառարկվեն Բանկի պաշտոնական կայքում և ֆեյսբուքյան էջում՝ մինչև 2022 թվականի դեկտեմբերի 15-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59:

6.8. Հաղթող մասնակցի՝ մրցանակը ստանալու անհնարինության դեպքում մրցանակը կարող է ստանալ մասնակցի լիազորված անձը՝ օրենքով սահմանված կարգով տրամադրված լիազորագրով և անձը հաստատող փաստաթղթով:

6.9. Լիազորագիրը հնարավոր է տրամադրել նաև Բանկում, թվային ճանապարհով՝ ՀԾ ինտերնետ բանկ համակարգի միջոցով կամ Converse Mobile հավելվածի «չատ» բաժնում:

6.10. Մրցույթի, մրցանակների տրամադրման մանրամասները ճշտելու համար Բանկը կապ է հաստատում Հաղթողների հետ հեռախոսով/էլեկտրոնային փոստով: Բանկը կստանա կամ կպահանջի միայն այնպիսի անձնական տվյալներ, որոնք անհրաժեշտ են համարում մրցանակը տրամադրելու և շուկայավարման նպատակներով օգտագործելու համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության: Հաճախորդների անձնական տվյալների վրա տարածվում է Բանկի գաղտնիության քաղաքականությունը: Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցը համաձայնում է Մրցույթի բոլոր պայմաններին:

6.11. Բանկը պատասխանատվություն չի ստանձնում կատարելու այլ ծախսեր, որոնք անհրաժեշտ կլինեն հաղթողին իր մրցանակի օգտագործման համար, այդ թվում՝ մրցանակը չի ենթադրում, որ Բանկը տալիս է երաշխիք, որ հաղթողը կկարողանա ստանալ այլ երկիր մեկնելու թույլտվություն/վիզա, եթե այդպիսին պահանջվում է: Հաղթողը հավաստիացնում է, որ տեղեկացված է, որ մրցանակները ստանալու է «այնպես, ինչպես կա», ինչպես նաև ցանկացած լրացուցիչ ծախսերը/գործողությունները կատարվելու են հաղթողի կողմից:

6.12. Բանկի հաղորդակցման տվյալները
Հավելյալ տեղեկատվության համար կարող եք՝

- այցելել Բանկի Գլխավոր գրասենյակի Հաճախորդների սպասարկման գրասենյակ կամ ցանկացած մասնաճյուղ
- զանգահարել +374 10 511211 հեռախոսահամարով
- Email՝ info@conversebank.am
- Viber՝ +374 95 511211
- Skype՝ [conversebank-callcenter](https://www.skype.com/join/conversebank-callcenter)